

Առաջնորդանիստ եկեղեցւոյդ, իսկ որպէս կառավարիչ անմիջական ըստ յատուկ ցանկութեան բարերարին նշանակեմք զանդամն Յանձնաժողովովոյդ զծ. Դիւտ աւագ բահանայն Ազանեանց:

Յանձն առնելով զայս ազգապարծան գործ Զեղ Յանձնաժողովոյդ թողումք ի կամս Զեր առնել զպատշաճաւորն կարգադրութիւն յաղազս բացման նորին ի միսիթարութիւն և քաջակերութիւն բարերար հիմնադրին, որոյ կտակաւ ունին յանձնիլ ի գործադրութիւն Յանձնաժողովիդ բանի մէ այլ բարենպատակ և կարևոր կարգադրութիւնք:

Օրհնելով ղբարերարն, զպատճառն և զնորընտիր Յանձնաժողովիդ նորոգ թանդարանի՝ մաղթեմք վասն ամենեցունցդ կալ մնալ յառողջ և յաջող ի կենցաղս ազգօպուտ գործուիք առարինական վաստակովք և քրիստոնէական բարեկործութեամբ, արժանացեալք զովութեան ազգիս և վարձուց երինաւորին: Ողջ լերուք և օրհնեալք յԱստուծոյ Հօրէ և ի Մէնջ. Ամին:

#### ՄԱՐՑԻ Կարուղիկոս և մենայն Հայոց

Ի 15 Յունիսի 1900 ամի և ըստ տոմարիս ՌՅԱԹ  
ի Հայրապետութեան մերումէ. ամի, յԱրարատեան Մայր  
Աթոռ Ս. Էջմիածնի, Ի Վաղարշապատ: Թ. 660.

### † ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՐՈՒՐԵԱՆ

Հայ զրականութիւնն ընդհանրապէս և Ցածկահայպարերական մամուլը մասնաւորապէս՝ քսաներուդ դարու հէնց սկզբին մեծ կորուստ ունեցաւ յանձնին Մ. Մամուրեանի:

Դեռ մի տարի. առաջ Ցածկահայերը մեծ շքով տօնեցին այդ զրական բեղմնաւոր գործիչից յիսնամեայ յօրելեանը և ահա յունուարի 2 ին յանկարծ նրա մահուան բօթն են հազօրդում լրադիրները:

Մեր զրական զործիչներից շատ քչերին է վիճակուել յիսուն տարի շարունակ զրիշը ձեռքին և տոկուն:

աշխատութեամբ մաքառել — յանուն սկզբունքի — ամեն տեսակ արտարին և ներքին խոչնպոտների դէմ, բարձր պահելով մամուլի կոչումը:

Մամուրեանը երեսուն տարի խմբագրելով և հրատարակելով «Արևելեան մամուլ» երկշաբաթաթերթի՝ եղակի դիրք ուներ տաճկահայոց ասուպների նման երեսցով և անհայտացող պարբերական հրտարակութիւնների մէջ և ուղղութեամբ ևս զգալի կերպով զանազանութեամբ էր Պօլսի լայնածաւալ թերթիրից: «Արևելեան մամուլը» տալիս էր ըստ մեծի մասին լուրջ յօդուածներ՝ թէ հայոց գրականութեան ու պատմութեան շրջանից, թէ բնական զիտութիւններից և թէ մանկավարժութիւնից:

Մամուրեանն եւրոպական կրթութեան տէր մարդ լինելով աւելի ենթակայ էր ֆրանսիական ուղղութեանը և այդ պատճառով էլ նրա թարգմանութիւններն ըստ մեծի մասին ֆրանսելէնից և ֆրանսիական հեղինակներից էին. այդ թարգմանութեանց չնորհիւ հայերէն կարդացողների թիւը հետզհոտէ ստուարանում էր և տաճկահայոց աշխարհաբարը զոկում և կանոնաւորուում:

Մամուրեանն իբրև տեսուչ և ուսուցիչ մի քանի տասնեակ տարբիներ ամբողջ սերսնիցներ է կրթել Զմիւռնիայում, դպրոցներ բարեկարգել, և բազմաթիւ դասակրքեր յօրիննել:

Իբրև հասարակական դործիչ նաև եռանդուն մասնակցութիւն է ունեցել Զմիւռնիայի ազգային — վարչական և բարեգործական հաստատութիւնների մէջ և միշտ առաջնորդողի դեր ստանձնել:

Եյսպէսով Մամուրեանն իբրև խմբագիր, դաստիարակ, տեսուչ, բանասէր, թարգմանիչ, հասարակական գործիչ՝ մեծ համակրութիւն էր վայելում չնորհիւ իւր բրտնաջան աշխատութեան, հմտութեան, խոհականութեան և եռանդի ու տոկունութեան; նա վախճանուեց հօթանամնամեայ հասակում՝ թողնելով վշտանար՝ մօտ հարիւրամհայ մօրը, ամուսնուն և միակ որդուն:

Մամուրեանի յուղարկաւորութիւնը տեղի է ունեցել Զմիւռնիայում մեծ շքով, խօսուել են բազմաթիւ դամ-

բանականներ, որոնց մէջ նշանաւոր է Զմիւռնիայի առաջնորդ Տ. Մելքոնեղէկի Արք-եպիսկոպոսի իմաստալի և սըրտամորմոր ճառը:

Յաւիտենական հանգիստ քրտնաշան վաստակաւորին:

### ՄԱՄՈՒԼԻ ՍՏՈՒԵՐԸ

Որբան էլ կամենանք լաւատես լինել, չենք կարող ուրանալ, որ Վենետիկի Պազար կզգու միարանները չեն սիրում ոչ սիսալ դդալ և ոչ խրեանց նախորդաց վրայ սիսալ յիշել. այս բնական հետեւութիւն է անսխալականութեան դաւանանքի: «Էռումայի» անցեալ համարում տպուած Շիրակաւանի ժողովը յօդուածը, վրդովիր է «Բազմավէալի» խմբագրութեան և մէկը խօսելով ու գովասանելով այդ համարը, յարձակում է, նախ հայոցելով ինձ՝ իրը թէ ես ատելութեամբ տոգորուած եմ կաթուդիկութեան («) դէմ (եղուիթութեան դէմ այն) և ապա սխալ է գտնում մեր ասածը թէ Զամշեանը վերագրում է Քաղկը, դէմ գումարուած Մանազկերտի հայ-ասորական ժողովը ոմն Յովի. Մանազկերտցու և հ. Զ. նոյնը ակնարկում է իւր գովորութեան պատմութեան մէջ. և ասում է այդ խօսքի արուեստակը թէ Զամշ. ընդունում է Օձնեցու ժողովը և հերքում է «վաւերականութիւնը» Յ. Օձնեցոյ ընծայուած պատմութեան մը այդ ժողովոյն վրայ. այլև հ. Զ. այդ է կըկնած:

Թող գիտենայ հ. Տ., որ խօսքը Մանազկերտի այն ժողովի մասին է, որ գումարուել է Ասորոց հետ ընդդէմ Քաղկեդի և այն գրութեանց, որոնք այդ են հաստատում: Իսկ Զամշեան իւր պատմութեան Բ. 352—353 բացէ ի բաց վերագրում է Օձնեցու այդ ժողովը ոմն Յովհաննէս Մանազկերտցու, իւր ստեղծած տեղապահին, որ ժողով գումարելու այնքան իշաւասութիւն ունէր, որքան հ. Տ. Նշմարտութիւնը խոստովանելու իսկ 577—630 ոչ թէ մի պատմութեան վաւերականութիւնն է հերքում, այլ պնդում է՝ որ Օձնեցին խօսքով, գործով ու ժողովով հակառակ չէ եղել Քաղկեդին: Հարցը միայն այդ կէտի վրայ է և այդ «մոլորութիւնն» ու «մտութիւնն» և գրուածները՝ Հ. Գ. Զ. Զամշեանի վրայ յենուելով մեր պատ-